«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Կրտսեր դպրոցականների սոցիալականացման դժվարությունները /1-ին դասարանի օրինակով/

Հետազոտող ուսուցիչ՝ Ն.Փիլոյան

Արմավիրի մարզի Արազափ գյուղի միջնակարգ դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Լիլիթ Չալյան

ԱՐՄԱՎԻՐ- 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան----------3

Գրականության ակնարկ----------5

Գործնական համատեքստ ----------16

Հետազոտության նպատակը, խնդիրները, մեթոդ,գործիքը----------18

Հետազոտության արդյունքների վերլուծություն----------20

Անցումային ծրագիր----------27

Եզրակացություն----------29

Գրականության ցանկ----------30

Հավելվածներ----------31

ՆԱԽԱԲԱՆ

Սոցիալականացումը, անձի անհատականությունը ձևավորելու, նրա կողմից կոնկրետ հասարակության մեջ ընդունված նորմերը յուրացնելու, կիրառելու և համապատասխան ունակություններ ձեռքբերելու գործընթացն ու արդյունքն է:

Յուրաքանչյուր մարդ, իր կյանքի որոշակի ժամանակահատվածներում, դժվարություններ է ունենում՝ նոր տեսակի գործունեության, նոր իրավիճակի, նոր պայմանների անցման հետ կապված: Նոր պայմաններին հարմարվելու հաջողության չափանիշն առաջին հերթին հոգեբանական և ֆիզիկական առողջության պահպանման աստիճանն է: «Դեզադապտացիա» տերմինը նշանակում է՝ արտաքին աշխարհի հետ մարդու փոխգործակցության գործընթացների խախտում: «Դպրոցական դեզադապտացիա» հասկացությունն ավելի նեղ է և ենթադրում է երեխայի անկարողությունը գտնելու իր տեղը՝ դպրոցական կրթության տարածքում, որպեսզի նա ընդունվի այնպիսին, ինչպիսին կա՝ պահպանելով և զարգացնելով իր ինքնությունը, ներուժը և ինքնորոշման հնարավորությունները: [11,էջ 83]:

Ժամանակակից մանկավարժության մեջ երեխայի սոցիալականացման հիմնախնդիրը, նրա սոցիալական դերակատարումը, դիրքորոշումները չափազանց կարևոր հարցեր են, որոնք ունեն մի շարք հակասություններ: Սոցիալականացումը դիտարկվում է որպես գործընթաց, որն ապահովում է անձի ներառումը այս կամ այն սոցիալական խմբի կամ հասարակության մեջ: Աճող սերնդի ձևավորումն ու զարգացումը, սոցիալականացումը նոր պայմաններում միշտ էլ եղել է հասարակության համար կարևորագույն հիմնախնդիրներից մեկը: Ներկա պայմաններում տվյալ խնդիրների նշանակությունն ու արդիականությունը աճում է այն առումով, որ հասարակությունն ինքն էլ գտնվում է զարգացման անցումային փուլում: Ժամանակակից հասարակության բոլոր ոլորտների զարգացման արդյունքում առաջին պլան է մղվում անձի սոցիալականացումը, այսինքն՝ նրա կողմից հասարակական արժեքների յուրացումը՝ սկսած դեռևս վաղ տարիքից, սակայն անձի ձևավորումը և կայացումը տեղի է ունենում ողջ կյանքի ընթացքում:

6-10 տարեկանը չափազանց կարևոր տարիք է թե՛ հոգեկան և թե՛ սոցիալական զարգացման համար: Նախ արմատապես փոխվում է սոցիալական կարգավիճակը, երեխան դառնում է դպրոցական, որն էլ տանում է կենսական

հարաբերությունների ողջ համակարգի վերակառուցման: Նոր սոցիալական կարգավիճակի ձեռքբերումը և դրան համապատասխան նոր սոցիալական դերի ընդունումը և դրանց ներքին գիտակցումը տեղի են ունենում նոր սոցիալապես կարևոր ուսումնական գործունեության իրականացման, նոր միջանձնային հարաբերություններում ընդգրկվելու, տվյալ տարիքի հիմնական հոգեբանական նորագոյացությունների ձևավորման և հետագա զարգացման նախադրյալների հիման վրա: [5,էջ 116]:

Չնայած կատարված բազմաթիվ ուսումնասիրություններին, կրտսեր դպրոցականների սոցիալականացման գործընթացը դեռևս հետազոտության կարիք ունի պայմանավորված կրթական համակարգում կատարվող շարունակական բարեփոխումներով: Տարրական դպրոցում իրականացվող բարեփոխումներն ուղղված են հիմնականում ուսուցման գործընթացի կատարելագործմանը, միջազգային չափորոշիչների համապատասխանեցմանը: Սակայն կարևորագույն խնդիր՝ կրտսեր դպրոցականների հաջող սոցիալականացման, ուսուցման և դաստիարակության գործընթացներում համապատասխան սոցիալականացման ծրագրերի մշակման և նորարարացման գործընթացը համարվում է դեռևս չլուծված խնդիր:

Կարծում եմ, որ սոցիալականացման արդյունքում անձի նոր կարգավիճակի ձևավորումը՝ բարդ և հակասական հիմնախնդիր է: Այս և նշված հակասությունների առկայությամբ է պայմանավորված ներկայացված հիմնախնդրի արդիականությունը:

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Կրտսեր դպրոցական տարիքը անձի կայացման կարևորագույն փուլերից մեկն է, որի ընթացքում տեղի է ունենում անհոգ մանկությունից անցում այնպիսի մի շրջանի, երբ անհրաժեշտություն է ծագում նոր դերեր կրել, պատասխանատու լինել, տարբեր պահանջներ իրականացնել: Այս տարիքը կարևորվում է երեխայի դպրոցական կյանքով՝ այսինքն երեխայի համար խիստ կարևոր առաջատար գործունեության սկզբով և դրան հարմարվելով: Այս շրջանում տեղի է ունենում նաև երեխայի օրգանիզմի ինտենսիվ կենսաբանական զարգացում: Գիտակցության զարգացման ֆոնի վրա տեղի է ունենում «Ես» կերպարի ձևավորում, երեխան աստիճանաբար տիրապետում է ինքնակառավարման ձևերին: Առավել ինտենսիվորեն սկսում են զարգանալ կամածին ուշադրությունը, ընկալման, հիշողության, մտածողության, վարքի և կամքի ինքնակարգավորման գործընթացները, շփման ոլորտները ընդլայնվում են: Դպրոցում ուսման սկիզբը շատ բարդ և պատասխանատու է երեխայի համար՝ ինչպես սոցիալ-հոգեբանական, այնպես էլ ֆիզիոլոգիական կողմով: Փոխվում է երեխայի ամբողջ կյանքը, ամեն ինչը ենթարկվում է ուսմանը, դպրոցին, դպրոցական գործերին և պարտականություններին: Սրանք ոչ միայն կյանքի և գործունեության նոր պայմաններ են, այլև նոր կապեր, հարաբերություններ և պարտականություններ [7,էջ 120]:

Այս շրջանում հակասության մեջ են մտնում երկու հիմնական դրդապատճառ՝ անհրաժեշտության և ցանկության: Մի կողմից, առաջնորդվելով անհրաժեշտության պահանջմունքով, երեխան բացահայտում է հասուն կյանքը, իսկ մյուս կողմից, դրդված լինելով ցանկության պահանջմունքով, երեխան ցուցաբերում է այնպիսի վարք, որը վերադարձնում է իրեն մանկության աշխարհ, որտեղ ամենը ապահով է, ծանոթ, իրականանալի, չկան որոշակի պարտականություններ և պահանջներ:

Մի կողմից, երեխան իմպուլսիվ է, անհանգիստ, ունի ոչ կայուն ուշադրություն, իսկ մյուս կողմից, քանի որ նրա մոտ արդեն ձևավորվում է պահանջմունքների նոր մակարդակ, նա սկսում է գործել, առաջնորդվելով որոշակի նպատակներով, արժեքներով, զգացմունքներով: Կրտսեր դպրոցականի զարգացման ընթացքում հստակ երևում են զարգացման որակական փոփոխություններ: Երեխայի հոգեկան

զարգացման կենտրոնում է հայտնվում կամածինության ձևավորումը /պլանավորում, գործողությունների զարգացման ծրագիր, վերահսկողության իրականացում/:

Այս տարիքի երեխայի զարգացման հիմնական բնութագրերից է այն, որ թեև կտրուկ փոխվում է գործունեության հիմնական ձևը, դեռևս պահպանվում է խաղալու պահանջմունքը: Այդ իսկ պատճառով դպրոցական կյանքի սկզբնական շրջանում չափազանց կարևոր է ուսումնական գործընթացում խաղային տարրերի առկայությունը, ինչը մեծացնում է երեխայի հետաքրքրությունը ուսման հանդեպ: Մեծ է նաև շարժվելու պահանջմունքը, հետևաբար, ուսուցիչը ուսումնական գործընթացը կազմակերպելիս պետք է կիրառի շարժողական խաղեր, որոնք նպաստում են երեխայի ուշադրության զարգացմանը, կենտրոնանալու կարողությանը:

Կրտսեր դպրոցականի համար նաև չափազանց կարևոր է նոր տպավորություններ ստանալու պահանջը, որի հիման վրա ձևավորվում են գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ձեռքբերելու պահանջը: Այսպահանջըառաջնորդումէերեխայիզարգանալու, դրդապատճառների նոր համակարգ ձևավորելու ընթացքը: Ողջ համակարգում կարևոր դեր ունի սոցիալական դրդապատճառների ձևավորումը, որը ի հայտ է գալիս երկրորդից երրորդ դասարաններում: Աշակերտի համար կարևորվում են ուսուցչի գովասանքը, գնահատականը, ավելի ուշ հասակակիցների կարծիքը իր անձի վերաբերյալ: Այս ամենը նպաստում է երեխայի կողմից սոցիալական իր նոր դերերի գիտակցմանը, իր «Ես»-ի ինքնահաստատմանը: Երեխայի դրդապատճառների առաջացման, հետաքրքրության պահպանման, «Ես»-ի ինքնահաստատման գործընթացում չափազանց կարևորվում է ուսուցչի դերը: [1,էջ 59]:

Կրտսեր դպրոցականի մոտ առաջնային է նաև բարոյական դրդապատճառների ձևավորումը, ինչում կարևոր դեր են խաղում իդեալների ձևավորումը, որոնք կրում են շատ հստակ բնույթ /հիմնականում տարբեր գրքային կամ հեռուստատեսային հերոսներ/, փոփոխական են և ազդում են իրենց արտաքին կողմերով[5, էջ 163-173]:

Կրտսեր դպրոցի առաջին տարիներին ուսուցիչը երեխայի համար միակ և անկոտրում հեղինակությունն է: Աշակերտի շփումը հիմնականում ուղղված է նրան, համադասարանցիների նա ընդունում է ուսուցչի միջոցով, արժևորում է այն համադասարանցիներին, ում գնահատում է ուսուցիչը: Հետզհետե մեծանում է հասակակիցների հետ շփվելու պահանջը, որի բավարարման ընթացքում երեխան սկսում է հասկանալ առկա կանոնները, միջանձնային շփման նրբությունները:

Ուսումնական գործունեությունը փոխում է երեխայի զգացմունքների բովանդակությունը, նրանք դառնում են ավելի գիտակցված և զսպված: Դրական զգացմունքները այժմ առաջանում են ոչ միայն հաճելի խաղ խաղալուց և հաճույք ստանալուց, այլ որոշակի մտավոր գործունեություն կատարելուց, դժվարություններ հաղթահարելուց, մրցակցությունից:

Կրտսեր դպրոցական տարիքի հիմնական նորագոյացություններից է գործողությունների *կամածինության զարգացումը*, որը բավական երկարատև գործընթացէ, և սկսվում է ուսումնական գործունեությանընթացքում: Ձևավորվումէ կամքը, որը անընդհատ գործընթաց է, քանի որ ուսումնական գործունեության ողջ ընթացքում երեխայի առջև դրվում են նորանոր նպատակներ: Սկզբնական շրջանում կամքի ձևավորումը մեծապես պայմանավորված է արտաքին պայմաններով՝ պահանջներով, ցուցումներով, օրինակներով, սակայն զարգացման ընթացքում երեխան սկսում է առաջնորդվել սեփական պահանջներով, ցանկություններով, ձգտումներով: Կարևորագույն բնութագրերից է ինքնուրույնությունը, որին դրդում են մեծահասակները:

Իմացական ոլորտի զարգացում: Ուսումնական գործունեության համար կարևոր իմացական գործընթացներից է հիշողությունը:

Աշակերտին անհրաժեշտ է մտապահել մեծ քանակությամբ տեղեկատվություն և վերարտադրել այն: Չտիրապետելով հատուկ հմտությունների, երեխան հիշում է մեխանիկորեն, սակայն մեծ քանակի նյութի մտապահման դեպքում դա հետզհետե դժվարանում է:

Ուսումնական գործընթացը, գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձեռքբերումը ենթադրում է աշակերտի *ինքնակառավարում*, ինչը հնարավոր է իրականացնել լավ զարգացած կամածին ուշադրության դեպքում: Ուսման սկզբնական շրջանում երեխային գրավում է երևույթների միայն արտաքին կողմը, իսկ ուսուցչի դերը կայանում է նրանում, որ պարբերաբար սովորեցնի դիտողականությանը, երևույթների էության ըմբռնմանը, հասկացմանը և այլն: Նպատակահարմար է, օրինակ, խնդրել երեխային ստուգել իր ընկերոջ կամ իր գրածը, համեմատել սկզբնական նյութի հետ, զննել և մտապահել առարկաների կարևոր բնութագրերը և այլն: Ուսումնական գործունեության ընթացքում մեծահասկաների օգնությամբ երեխայի մոտ զարգանում են ուշադրության բաշխումը և տեղափոխելիությունը:

Այս տարիքում առաջնային պլան է մղվում *մտածողության զարգացումը*: Այն դառնում է առավել տրամաբանական, ինքնուրույն, ճկուն:

Կրտսեր դպրոցական տարիքում ինտենսիվ *զարգանում և հարստանում է երեխայի խոսքը*: Ուսուցիչը կարող է օժանդակել այս գործընթացին՝ ապահովելով հարուստ խոսքային միջավայր /գրքերի ընթերցում, ֆիլմերիդիտում, խոսքի ունկնդրում/,ստեղծելով դասաժամերին արտահայտվելու և շփվելու հնարավորություններ, ձևավորելով բավարար բառապաշար:

Ձևավորելով գեղեցիկ խոսք օգտագործելու պահանջմունք և այլն: Այս տարիքում նաև ձևավորվում է գրավոր խոսքը, որը բավականաչափ ծանր, երկարատև և կամային ճիգեր պահանջող գործունեություն է: [3,էջ 64]:

Այսպիսով, կարելի է փաստել, որ կրտսեր դպրոցական տարիքում երեխաները ունենում են հետևյալ ձեռքբերումները՝

- Իմացական ոլորտի զարգացում
- աֆեկտիվ-պահանջմունքային նոր մակարդակի ձևավորում, ինչը թույլ է տալիս գործել ոչ թե անմիջականորեն, այլ առաջնորդվելով հստակ գիտակցված նպատակներով, բարոյական նորմերով և արժեքներով;
- հարաբերականորեն կայուն վարքաձևերի ձևավորում

- երեխայի սոցիալական ուղղվածության զարգացում:

Այսպիսով, ելնելով վերը թվարկածից կրտսեր դպրոցական տարիքը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

- Հոգեբանական նորագոյացություններ՝ գիտակցություն, իրազեկության զգացմունք, կամային վարքագիծ, ինքնավերլուծություն
- Առաջատար գործունեություն՝ ուսուցում և ուսումնառություն
- Գերակշռող հոգեկան գործընթաց՝ մտածողություն
- Շփման շրջանակներ՝ մեծահասակներ, դպրոց, հասակակիցներ, ուսուցիչ[7,էջ 133]:

Սոցիալականացումը, լինելով միջգիտական տերմին, արտացոլում է բավականին բարդ սոցիալական երևույթ: «Մարդն անձնավորություն է դառնում զարգացման գործընթացում, որում էական նշանակություն ունի սոցիալականացումը, որն անհատի կողմից վարքային մոդելների, հոգեբանական մեխանիզմների, սոցիալական նորմերի ու արժեքների յուրացման գործընթաց է»: «Սոցիալականացումը մարդկային անհատի կողմից փորձի յուրացումն է, որի արդյունքում ձևավորվում է կոնկրետ անձը» [7, էջ 39]:

Իրենց աշխատություններում սոցիալականցման գործընթացին անդրադարձել են շատ հեղինակներ, ինչպես օրինակ՝

- **Տեսություն<<Հայելային ես>>Չ. Կուլի. Ջ. Միդ**

  Ամերիկացի գիտնականներ Չարլզ Հորթոն Կուլին (1864-1929) և Ջորջ Հերբերտ Միդը (1863-1931) կարծում էին, որ անհատականությունը ձևավորվում է արտաքին աշխարհի հետ մարդկանց բազմաթիվ փոխազդեցությունների հիման վրա: Երեխայի համար ծնողների, ընկերների, հարևանների կարծիքներն այնքան կարևոր են դառնում, որ նրանց ազդեցության տակ նա զարգացնում է խմբից տարբերվելու և իր «ես»- ի մասին իրազեկվելու կարողությունը, որը Չ. Կուլին անվանել է «Հայելային ես»: Չարլզ Հորթոն Կուլին կարծում էր, որ անհատականությունը ձևավորվում է արտաքին աշխարհի հետ մարդկանց

բազմաթիվ փոխազդեցությունների հիման վրա: Այս փոխազդեցությունների գործընթացում մարդիկ ստեղծում են իրենց «հայելային ես»-ը: «Հայելայի ես»-ը դառնում է երեխայի ինքնագիտակցության ամենակարևոր տարրը: Դրա շնորհիվ նա զարգացնում է ինքնագնահատականը՝ իրեն շրջապատող մարդկանց աչքերով՝ իրեն նայելու կարողությունը, զարգացնում է հպարտության, հարգանքի կամ նվաստացման զգացում՝ սեփական <<ես>>-ի նկատմամբ:{4,էջ 64}

- **Տեսություն <<անհատի մշտական կոնֆլիկտը հասարակության հետ>>Զ. Ֆրեյդ**

Զիգմունդ Ֆրեյդ (1856-1939) – ավստրիացի հոգեբան, սոցիոլոգիայում հոգեվերլուծական կողմնորոշման հիմնադիրը: Ֆրեյդը սոցիալականացումը դիտարկում էր՝ որպես բնականի և սոցիալականի միջև փոխազդեցության բարդ գործընթաց: Նրա կարծիքով՝ սոցիալականացումը սոցիալական միջավայրում տեղի ունեցող գործընթաց է՝ զսպելու ֆիզիոլոգիական ազդակները (հատկապես սեռական), որոնք հակասում են սոցիալական միջավայրի մշակույթի նորմերին: Անհատականության զարգացման տեսությունը, որը մշակվել է Զիգմունդ Ֆրեյդի կողմից, որոշ չափով հակառակն է Միդի հայեցակարգին, քանի որ այն հիմնված է այն համոզմունքի վրա, որ անհատը միշտ գտնվում է հասարակության հետ կոնֆլիկտի մեջ: Ըստ Ֆրոյդի, կենսաբանական հորդորները (հատկապես սեռական) հակասում են մշակութային նորմերին, և սոցիալականացումը այդ հորդորների զսպման գործընթացնէ: Ֆրոյդի տեսությունը առանձնացնում է անձի հոգեկան կառուցվածքի երեք մաս՝ Id («Այն»), Էգո («Ես») և Սուպերէգո («գեր-ես»):{6,էջ38}

- **Ճանաչողության զարգացման տեսությունը՝ որպես անհատականության ուսուցման գործընթաց Ժ.Պիաժեի կողմից**

Ժան Պիաժեի առաջարկած մոտեցումը զգալիորեն տարբերվում է Ֆրեյդի անձի զարգացման տեսությունից: Ժան Պիաժեն ուսումնասիրել է ճանաչողական զարգացումը կամ մտածել սովորելու գործընթացը: Նրա տեսության համաձայն՝ ճանաչողական զարգացման յուրաքանչյուր փուլում ձևավորվում են նոր հմտություններ, որոնք որոշում են այն սահմանները, թե ինչ կարելի է սովորեցնել մարդուն այս փուլում: Երեխաներն այս փուլերն անցնում են որոշակի

հաջորդականությամբ, թեև պարտադիր չէ, որ նույն արագությամբ և արդյունքներով:{7,էջ110}

- **Լ.Կոլբերգի բարոյական զարգացման տեսությունը**

Ֆրեյդը կարծում էր, որ Սուպեր էգոն կատարում է բարոյական գործառույթ, խրախուսում և պատժում է Էգոյին իր գործողությունների համար: Հարվարդի հոգեբան Լոուրենս Կոլբերգը (1963 թ.), ով մեծ նշանակություն էր տալիս երեխաների բարոյական զարգացմանը, խնդրին մեկ այլ մոտեցում մշակեց, որում զգացվում է Պիաժեի տեսության ազդեցությունը: Կոլբերգը առանձնացրել է անհատի բարոյական զարգացման վեց փուլեր, որոնք փոխարինում են մեկը մյուսին խիստ հաջորդականությամբ, որը նման է Պիաժեի ճանաչողական փուլերին: Անցումը մի փուլից մյուսին տեղի է ունենում ճանաչողական հմտությունների բարելավման և կարեկցանքի հետ կարեկցելու կարողության արդյունքում: Ի տարբերություն Պիաժեի, Կոլբերգը անհատի բարոյական զարգացման ժամանակաշրջանները չի կապում որոշակի տարիքի հետ: {9,էջ104}

«Սոցիալականացում» հասկացության հեղինակ է համարվում նաև ամերիկացի սոցիոլոգ**Ֆ. Գ. Հիդդինգսը**, ով 1887թ. «Սոցիալականացման տեսություն» գրքում ձևակերպել է այն հետևյալ իմաստով.

- Սոցիալականացումը անձի սոցիալական բնույթի կամ բնավորության զարգացումն է:
- Սոցիալականացումը մարդու պատրաստումն է՝ հասարակական կյանքին:

Տարբեր մանկավարժահոգեբանական բառարաններում «սոցիալականացում» տերմինը մեկնաբանվում է առաջին հայացքից միևնույն ձևով, սակայն կան որոշ տարբերություններ: Հոգեբանական բառարանում, որը լույս է տեսել 1983 թվականին, հեղինակներ **Վ.Դավիդովի, Ա.Զապորոժեցի, Բ.Լոմովի** կողմից մեկնաբանվում է, որ «սոցիալականացում» տերմինը ծագել է լատիներեն Socialis բառից, այսինքն՝ հասարակական բառից, որն իրենից ներկայացնում է անձի կողմից սոցիալական փորձի յուրացում և ակտիվ վերարտադրում:{10,էջ 25}

Որոշ դեպքում «սոցիալականացումը» հասկացվում է՝որպես անձի կողմից հասարակական կենսափորձի և հասարակական հարաբերությունների յուրացման

բազմակողմանի գործընթաց: Սոցիալականացումը այստեղ վերաբերվում է այն գործընթացներին, որոնց միջոցով մարդիկ սովորում են ապրել համախմբված և արդյունավետ փոխներգործելով: {2, էջ 135}

Սոցիալականացման գործընթացը առավել կարևորվում է կրտսեր դպրոցական տարիքում:

Առաջին դասարանցիների գիտելիքների յուրացման վրա ազդող գլխավոր գործոնը հանդիսանում է սոցիալ-հոգեբանական հարմարումը դպրոցի պայմաններին: Դպրոց հաճախելը, նոր պայմանները բարձր պահանջներ են ներկայացնում երեխայի հոգեկանին և պահանջում ակտիվ հարմարում այդ նոր պայմաններին: Ոչ բոլոր երեխաների մոտ է այն հանգիստ անցնում: Դա կարող է որոշվել երեխայի առողջական վիճակով, դպրոցին պատրաստվածության մակարդակով: ԸստՎ.Ե.Կոգանի սահմանման դպրոցական ապահարմարումը երեխայի անձի հոգեծին գոյացությունէ, որը խաթարում է նրա օբյեկտիվ և սուբյեկտիվ կարգավիճակը դպրոցում և ընտանիքում և դիպչում երեխայի ուսումնական և արտաուսումնական ակտիվությանը: Ուսումնասիրելով վեց տարեկան առաջին դասարանցիների վարքը՝Տ. Վ. Դորոժովեցը հայտնաբերել է ապահարմարման երեք ոճ.

1. արտացոլում է միջավայրի վարքային պահանջներին երեխայի լրիվ ենթարկվելու ձգտումը,

2. այս ոճի համար բնութագրական է սոցիալական միջավայրն իր պահանջմունքներին ենթարկելու վեց տարեկանի ձգտումը,

3. երեխայի զարգացման նոր սոցիալական վիճակն ընդունելու անկարողությունն է :

Մի շարք հեղինակներ՝Ե.Վ. Նովիկովա, Գ.ՎԲուրմենսկայա, Վ.Ե. Կոգան և ուրիշներ, գտնումեն, որ դպրոցին ապահարմարման հիմնական պատճառ են հանդիսանում ոչ թե ուսումնական գործունեության մեջ անհաջողությունները կամ ուսուցչի հետ երեխայի փոխհարաբերությունները, այլ դրանց առաջացրած ապրումները:

Ս.Ա Տարասովան առանձնացնում է առաջին դասարանցիների դպրոցին ապահարմարման հետևյալ առանձնահատկությունները.

- ✓ Դպրոցական ապահարմարումը նախ և առաջ կապված է ուսումնական գործունեության տիրապետման անկարողության հետ,
- ✓ Դժվարությունները ուսուցման մեջ և վարքում գիտակցվում են հիմնականում ուսուցչի՝ իրենց նկատմամբ ունեցած վերաբերմունքի միջոցով,
- ✓ Ապահարմարման առաջացման դժվարությունները հիմնականում կապված են ընտանիքում երեխայի և ուսուցման նկատմամբ ունեցած վերաբերմունքից:

Ինչպե՞ս օգնել վեց տարեկանին հեշտությամբ հարմարվելու դպրոցին: Դպրոցում ուսուցման առաջին տարին երեխայի հարմարման շրջանն է կյանքի նոր պայմաններին, որն ընթանում է տարբեր կերպ: [8,էջ 74]:

Շատ առաջին դասարանցիներ, հատկապես նրանք, ովքեր չեն հաճախել մանկապարտեզ, երկար ժամանակ չեն կարողանում հարմարվել դպրոցական կյանքին՝ վաղ վեր կենալուն, դասերին երկարատև նստելուն, հանձնարարությունները ժամանակին կատարելուն և այլն: Կան երեխաներ, ովքեր չեն կարողանում հաղորդակցվել հասակակիցների հետ, չեն ընդգրկվում դասարանի առօրյային և դժվարությամբ են հարաբերություններ ստեղծում ուսուցչի հետ: Որոշ երեխաներ դժվարանում են ուսման մեջ, չենհաղթահարումուսումնականծանրաբեռնվածությունը: Թվարկված դժվարություններից շատերի առաջացման պատճառները պայմանավորված են երեխաների անձնային առանձնահատկություններով: Առաջին դասարանցիների հարմարման դժվարությունները երբեմն կարող են կապված լինել հիշողության, մտածողության, խոսքի և այլ հոգեկան գործընթացների թույլ արտահայտված խաթարումներով:

Առաջին դասարանում դժվարություններ են ունենում նաև այսպես կոչված մանկավարժորեն բարձիթողի երեխաները, որոնց դաստիարակության հարցում թույլ են տրվել կոպիտ սխալներ: Դպրոցին սոցիալ–հոգեբանական հարմարման դժվարություններ ունենում են նաև բնականոն ֆիզիկական և մտավոր զարգացած երեխաները, ովքեր ընտանիքում միակ երեխան են, բայց սոցիալապես այդքան էլ հասուն չեն: Նրանք սովոր չեն աշխատելուն, գերագնահատում են իրենց, տարբերվում են անհամբերությամբ, անկայունությամբ, անհաջողություններից ավագին ընկալմամբ: Դպրոցում նրանք գերադասում են խաղալ, դասերն ու

ուսումնական գործունեությունը նրանց ձանձրացնում են : Այդպիսի երեխաները կանոնավոր չեն սովորում:

Այս տարիքում զարգացած է շարժման պահանջմունքը: Դրա ոչ բավարարման դեպքում նրանց մոտ բարձրանում է մկանային լարվածությունը, վատանում ուշադրությունը, արագ վրա հասնում հոգնածությունը: Այդ պատճառով նրանք ընդմիջումներին վազում են, աղմկում: Այս ամենով հանդերձ անհրաժեշտ է թեթևացնել երեխայի դպրոցին սոցիալ հոգեբանական հարմարման գործընթացը:

Նախ երեխան պետք է զգա, որ ծնողներն աջակցում են իրեն, հավատում, վստահում, կարևորում նրա պարտականությունները, այնուամենայնիվ, որքան էլ երեխային նախապատրաստում են դպրոցին, նա այդ ամենը ստիպված է յուրացնել գործնականում: Ծնողներին խորհուրդ է տրվում ամեն օր հետաքրքրվել երեխայի դպրոցական առօրյայով: Եթե դպրոցին սոցիալ հոգեբանական հարմարման դժվարությունները կապված են դասերի կամ ընդմիջումների ժամանակ երեխայի վարքագծի հետ, պետք չէ նրան պատժել կամ անընդհատ դիտողություն անել:

Ցանկալի է աշակերտի հետ հանգիստ քննարկել նրա սխալները, որպեսզի նա դրանք հասկանա և գիտակցի: Որպեսզի հարմարումը դպրոցին հեշտ ընթանա, կարևոր է դպրոց հաճախելու առաջին իսկ օրվանից հետևել երեխայի օրվա ռեժիմին: Դպրոցին սոցիալ-հոգեբանական հարմարման շրջանում պետք չէ երեխային ծանրաբեռնել լրացուցիչ պարապմունքներով տարբեր խմբակներ հաճախելով: Արտաուսումնական պարապմունքները կերկարաձգեն հարմարման գործընթացը:

Ինչպիսի պատճառներ են ընկած դպրոցական ապահարմարման հիմքում: Շատ հեղինակներ գլխավոր պատճառ են համարում, երեխաների հնարավորությունների անհապատասխանությունըուսմանպահանջներին, նրա մասին ունեցած պատկերացումներիհետ, այլ կերպ ասած,դպրոցական հասունության բացակայությունը:

Դպրոցական ապահարմարման առումով հնարավոր են մի քանի տարբերակներ:

Առաջին դեպքում երեխան ենթարկվում է իրականությանը և հուսահատվում: Երեխան հասկանում է, որ, չի հասցնի, չի հաղթահարի նոր դերը, բայց փորձում է հարմարվել նրան ինչպես կարող է՝ կատարում է բոլոր հանձնարարությունները,

հետևում բոլոր նորմերին: Եթե նման երեխային ժամանակին օգնեն ինքնավստահություն, կարգապահություն, շփման կարողություններ ձեռք բերել, նա կկարողանա հարթել իր դպրոցական կյանքը: Բավական է ուսուցիչը նրան մի անգամ բոլորի մոտ գովաբանի, որ նա հասկանա՝ ամեն ինչ այդքան էլ վատ չէ և ամեն ինչ կարելի է հաղթահարել:

Մյուս դեպքում նա գործում է հետևյալ սկզբունքի համաձայն. <<Չպետք է հարմարվել փոփոխվող աշխարհին, ավելի լավ է այն հարմարվի քեզ>>: Նա հակամարտության մեջ է մտնում ուսուցիչների, համադասարանցիների հետ: Երեխան բողոքում է իր կյանքում առաջացած իրավիճակի դեմ, որին նա ունակ չէ հարմարվել:

Դպրոցական ապահարմարման զարգացման երրորդ տարբերակը բնութագրվում է կամային գործընթացների շատ թույլ զարգացմանբ՝ այս երեխաները ի վիճակի չեն համաձայնեցնել <<ուզում եմ>>, <<չի կարելի>> և <<պետք>> է –ն, ինչի արդյունքում ուսուցչի համար նրանց ուսուցումը վերածվում է ծանր աշխատանքի, ծաղրանքի առարկա են դառնում համադասարանցիների համար:

Կրտսեր դպրոցականների սոցիալականացման գործընթացը պայմանավորված է հետևյալ դժվարություններով.

- առարկայական ուսուցմանն անպատրաստ լինելը,
- երեխայի ոչ բավարար հոգեֆիզիկական զարգացումը,
- ծնողների և ուսուցչի կողմից ուշադրության և օգնության բացակայությունը,
- սեփական վարքագիծը կառավարելու անկարողությունը,
- դպրոցական կյանքի ռիթմի ընդունման անկարողությունը,

Այսպիսով, ավագնախադպրացականտարիքիերեխաներիսոցիալ-հոգեբանականհարմարումըդպրոցականուսուցմանըերեխայիօրգանիզմիդպրոցակա նկարգացույցիպայմաններինհարմարվելուգործընթացէևարդյունքէերեխայիկողմիցփ որձիհամատեղուսումնաճանաչողականգործունեությանտիրապետման:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Հաշվի առնելով վերոնշյալ հիմնախնդրի արդիականությունը և ուսումնասիրելով դրա վերաբերյալ առկա գրականությունը, որը փաստեց, որ հանրակրթության ոլորտում պետական քաղաքականությունը պահանջում է, որ հանրակրթության բոլոր մակարդակները՝ նախադպրոցական կրթությունից մինչև միջնակարգ կրթություն ներառյալ, ապահովեն մատչելի և որակյալ կրթություն բոլոր երեխաների համար: Այդ մակարդակների միջև սահուն անցումը՝ երեխայի կուտակած փորձով, գիտելիքներով ու սովորելու մոտեցումներով պայմանավորում է նրա սովորելու շարունակականությունը և հաջողությունը: Կրտսեր դպրոցականի սոցիալականացման գործընթացում կարևորվում է մանկապարտեզի և դպրոցի դերը, աշխատանքների հաջորդականության արդյունավետ պայմանների պահպանումը, մանկապարտեզից դպրոց սահուն անցումը:

Ելնելով իմ աշխատանքային բազմամյա փորձից կարող եմ փաստել, որ անցման գործընթացում երեխաները կարիք ունեն հարմարվելու հետևյալ ասպեկտներին.

- հարմարվել տնից դուրս նոր միջավայրին,
- հարմարվել մանկապարտեզին հրաժեշտ տալուն,
- հարմարվել, որ գնալու են ավելի մեծ, անծանոթ միջավայր՝ ամբողջովին տարբեր շրջապատով,
- հարմարվել շատ ավելի մեծ թվով և տարբեր տարիքի երեխաների միջավայրին, որտեղ մեծերը շատ ավելի քիչ են թվով,
- նոր ընկերներ ձեռք բերել,
- նոր հարաբերություններ հաստատել,
- հարմարվել դասավանդման նոր մոտեցումներին ու տարբեր ուսումնական ծրագրերին,
- հարմարվել տարբեր սպասելիքներին՝ ինչպես ծնողներից այնպես էլ ուսուցիչներից,
- հարմարվել իրավիճակի համապատասխանությանն իրենց սպասելիքներին ու ակնկալիքներին,

- հարմարվել նոր սոցիալական, զգայական, հուզական, վարքային և գիտակցական իրականությանը,
- հարմարվել անսովոր սանհանգույցներին, ճաշարանին, դասարանների դասավորությանը, միջանցքներին և այլն:

Եթե անցումը կազմակերպվում է այնպես, որ երեխայի համար նոր միջավայր անցնելու սկիզբը և վերջը միաձուլվում են, ստեղծելով սահուն ու հարթ ճանապարհ, ծանոթ ու ճանաչելի առօրյայով, մոտեցումներով, անձանցով, պահպանելով հին սովորությունները, մինչև նորը չի դառնում ընդունելի ու հասկանալի և երեխան իրեն զգում է նույնքան ապահով ու վստահ, ապա կարելի է ասել, որ **անցումը սահուն է:**

Ուստի նախատեսում եմ հետազոտության 1 ին փուլում

Որպես գործիք ընտրել խաղը և կիրառել առաջին դասարանի սովորողների սոցիալականացման դժվարությունները բացահայտելու համար:

Կիրառելով անկետավորման մեթոդը՝պարզել, թե դասարանի աշակերտներից քանիսն ունեն սոցիալականացման դժվարություններ: Հարցաթերթերի մեթոդիկան կիրառել նաև 1-ին դասարանի դասվարի և սովորողների ծնողների հետ:

Նախատեսվում է հարցազրույցի մեթոդի օգնությամբ դասվարից և ծնողներից որոշակի տեղեկություններ հավաքագրել սովորողների մասին՝ կապված երեխաների անհատական առանձնահատկությունների հետ:

Հետազոտության ավարտին համագործակցելով երեխաների ծնողների մանկապարտեզի/ նախակրթարանի/ աշխատակազմի, ուսուցչի և երկու կառույցների տնօրենների հետ առաջարկել անցումային ծրագիր, որը հիմք կհանդիսանա մանկապարտեզից դպրոց սահուն անցումը կազմակերպելու համար /անցումային ծրագիրը կազմել սյուժետադերային խաղերի հիման վրա/:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ

Հետազոտության նպատակը, խնդիրները, մեթոդիկան,գործիքը

Հետազոտության նպատակը կրտսեր դպրոցական տարիքի երեխաների դպրոցական կյանքին սոցիալական հարմարման մակարդակի ախտորոշումն է և նպատակաուղղված ու համակարգված աշխատանքների միջոցով այդ գործընթացի արդյունավետության բարձրացումը:

Հետազոտական աշխատանքները կազմակերպելիս առաջնորդվել եմ նրանով, որ մանկապարտեզից դպրոց սահուն անցումը խթանում է կրտսեր դպրոցականի սոցիալականացմանը և այդ գործընթացում մեծ դեր են խաղում դաստիարակը, ծնողը, դասվարը, ինչպես նաև համապատասխան մանկավարժական պայմանների ստեղծումը:

Հետազոտական աշխատանքի ընթացքում մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

- Ախտորոշել մանկապարտեզից դպրոց արդյունավետ սահուն անցման մակարդակը:
- Համապատասխան մանկավարժական պայմանների կիրառմամբ նպաստել կրտսեր դպրոցականների սոցիալականացմանը:

Հետազոտության մեթոդները.

- Գիտամանկավարժական գրականության ուսումնասիրություն և վերլուծություն,
- դիտում,
- զրույց,
- հարցաթերթիկներ,
- հետազոտական վերլուծություն

Հետազոտության գործիք՝ խաղ

Հետազոտությունը իրականացվել է Արզափի Թ.Հուրյանի անվան միջն դպրոցի առաջին դասարանի 14 աշակերտների հետ: Փորձարարական հետազոտություններին մասնակցել են դասավանդող ուսուցիչները և ծնողները:

Հետազոտության առաջին փուլում իրականացրել ենք առաջին դասարանում ուսումնասիրություն, ուղղված աշակերտների սոցիալականացմանը նոր միջավայրում:

Կիրառել եմ հարմարման գործընթացի դիագնոստիկ հարցաթերթեր՝ առաջին դասարանի աշակերտների ծնողների և ուսուցիչների շրջանում: Դպրոցականների համար նախատեսված հարցարանները պարունակում էին՝ 10 հարց ծնողների համար՝ 10 հարց ուսուցիչների/դասվար, ֆիզկուլտուրայի ուսուցիչ, կերպարվեստի ուսուցիչ/10 հարց: Ուսուցիչների համար նախատեսված հարցաթերթ 7 հարց, ծնողների համար նախատեսված հարցաթերթ 9 հարց: Զրույց եմ ունեցել մանկապարտեզ չհաճախող երեխայի ծնողի հետ (հարցաթերթիկներ, զրույց):

Հետազոտության երկրորդ փուլում մշակել եմ համապատասխան մանկավարժական պայմանների համալիր, որը կխթանի կրտսեր դպրոցականի սոցիալականացման գործընթացը, կնպաստի միջանձնային կապերի հաստատմանը հասակակիցների հետ, համագործակցությանը,մշակել եմ անցումային ծրագիր համագործակցելով նախակրթարանի տնօրենի, դաստիարակների, դպրոցի տնօրենի և ուսուցչի հետ համագործակցության արդյունքում: Անցումային ծրագիրը նախատեսվում է իրականացնել նախակրթարանի ավագ խմբում

Հետազոտության երրորդ փուլում կատարել ենք աշխատանքի արդյունքների համեմատական վերլուծություն:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Կրտսեր դպրոցական տարիքի երեխաների դպրոցին սոցիալական հարմարման աստիճանը բացահայտելու նպատակով կատարել եմ դիտում դասապրոցեսի և դասամիջոցների ընթացքում, օգտվել եմ հարցարաններից նախատեսված առաջին դասարանցիների, նրանց ծնողների և ուսուցիչների համար, որպես գործիք ընտրել եմ խաղը ։

Հետազոտության առաջին փուլում՝ ախտորոշող, դիտարկեցինք փորձարարական խմբի երեխաներին դպրոցում ուսուցման գործընթացում, այնուհետև կազմակերպեցինք զրույց ծնողների, ուսուցիչների և աշակերտների հետ: Հարկ է նշել, որ ախտորոշող փուլում աշակերտների մեջ կար մեկ աշակերտ ով չէր հաճախել մանկապարտեզ, 2 քույրիկները հաճախել էին մանկապարտեզ այլ համայնքում: Որպես գործիք ընտրել եմ խաղը: Անցկացրել եմ հետևյալ խաղերը 1-ին դասարանում.

Խաղ 1

Միավորում ըստ հատկանիշների

Նպատակը՝ ըմբռնել շրջապատող մարդկանց բազմությունը, այդ բազմության մեջ գտնել նմանություններ և տարբերություններ: Խաղը հնարավորություն է տալիս խմբի ներսում դիտարկել երեխաների հարաբերությունները միմյանց հետ:

Ընթացքը՝ Ուսուցիչը հրահանգում է երխաներին կազմել խմբեր ըստ որևէ հատկանիշի:Օրինակ մազերի կամ աչքեր գույնի, ըստ հասակի: Խաղի ընթացքում սովորողներից 3-ը դժվարությամբ և միայն ուղղորդմամբ էին մոտենում խմբի մյուս անդամներին: Հենց այդ երեք աշակերտներից մեկը նախակրթարան կամ մանկապարտեզ ընդհանրապես չէր հաճախել, իսկ մյուս երկուսը քույրիկներ էին, ովքեր այլ համայնքում էին հաճախել մանկապարտեզ:

Խաղ 2

Իմ մասին

Նպատակը՝ զարգացնել երեխայի՝ իր հատկանիշները ճանաչելու և գիտակցելու հմտությունները: Այս խաղը հնարավորություն տվեց լսել երեխաների բնորոշումները իրենց և ընկերների մասին: Այս խաղի ընթացքում խմբի այն անդամները ովքեր միասին նախակրթարան էին հաճախել ակտիվորեն բնութագրում էին իրենց և իրենց ընկերներին, իսկ մյուս երեքի մոտ նկատվում էր

կաշկանդվածություն, ամոթխածություն:

Խաղ 3 ես և դու

Նպատակը՝ Խորացնել ընդհանրությունները և տարբերությունները դիտարկելու և դրանց մասին արտահայտվելու հմտությունները:

Ընթացքը՝ Երեխաները շարք են կազմում զույգերով՝ ձեռքերը գլխավերևում միացրած: Ուսուցիչը, անցնելով զույգերի միջով, ընտրում է մեկին, որն ինչ որ բանով նման է իրեն կամ տարբեր և հիմնավորում ընտրությունը: Այս խաղի ընթացքում նույնպես ակնհայտ էր երեք աշակերտների սոցիալականցման դժվարությունները:

Եթե վերլուծահամադրաբար ներկայացնեմ խաղի արդյունքները, ապա կարող եմ փաստել, որ առաջին դասարանում 3 աշակերտներ ունեին միմյանց հետ ադապտացման խնդիր, իսկ աշակերտներից 5-ի մոտ/այդ թվում վերոնշյալ 3 աշակերտները/ նկատվում էր դպրոցի և ուսուցչի պայմաններին սոցիալական հարմարման խնդիրներ:

Ընդհանրացնելով հարցման արդյունքերը ներկայացնում ենք հարցաթերթիկների արդյունքները գծապատկերի տեսքով.

Գծապատկեր թիվ 1. Առաջին դասարանցիների հարցարանի արդյունքներ



Հարցարան առաջին դասարանցիների համար թեստի արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս նկատել, որ փորձարկվող երեխաների մի մասը դպրոցի և ուսուցչի մասին համապատասխան տեղեկություններ չունեն:

Գծապատկեր թիվ 2. Ծնողների հարցարանի արդյունքներ



Ելնելով՝ ծնողների հարցարանի տված պատասխաններից, կարող ենք փաստել, որ վեց տարեկանում երեխաները դպրոցին սոցիալական հարմարման բավականաչափ դժվարություններ ունեն: Հարմարման բարձր մակարդակը 16% միջին մակարդակը 45%, ցածրը՝ 39%: Հարմարման դժվարությունները հիմնականում կապված են դպրոցական ուսումնառության ցածր պատրաստվածության, ռեժիմային փոփոխությունների հետ:

Գծապատկեր թիվ 3. Ուսուցիչների հարցարանի արդյունքներ



Ուսուցիչների հարցարանի արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 14 երեխաներից 5-ը դրսևորել դպրոցին սոցիալ-հարմարման բարձր մակարդակ, 8 միջին, 1-ը ցածր:

Աշակերտների հետ ունեցած զրույցը և դիտարկումները թույլ է տալիս արձանագրել, որ երեխաներից 7-ի մոտ առկա է բարձր ցուցանիշներ, նման երեխաները դրականորեն են տրամադրված դպրոցի և ուսումնական գործունեության հանդեպ և պատրաստ են ուսուցչի հետ համագործակցությանը: 4-ի մոտ առկա է միջին ցուցանիշ՝ նման երեխաների մոտ նկատվում են այնպիսի տագնապներ, թե չեն կարողանա հաղթահարել ուսումնական ծանրաբեռնվածությունն ու դպրոցի նոր պահանջները: 3 երեխայի մոտ նկատվում են ցածր ցուցանիշներ, նրանք որոշակի վախեր ունեն ուսուցչի և համադասարանցիների հետ հարաբերություններ կառուցելու գործում/:

Ելնելով ուսուցիչների հարցարանի արդյունքներից և դրանք համեմատելով ծնողների պատասխանների հետ տեսնում ենք, որ արդյունքներն այդքան էլ չեն տարբերվում:

Կրտսեր դպրոցական տարիքի կարևոր առանձնահատկություններից է այն, որ երեխաները դպրոց են հաճախում 6 տարեկան հասակում: Ուստի կարծում եմ, եթե 6 տարեկանում երեխային դպրոց ենք ուղարկում, պետք է կրթական միջավայրը հարմարեցված լինի երեխայի տարիքային առանձնահատկություններին, այն է.

Ունենանք դասասենյակի համապատասխան կահավորանք, դիդակտիկ պարագաներ, սնունդ և այլն: Թեպետ մասնագետները պնդում են, որ առաջին դասարանում ուսուցման գործընթացը խաղային ձևով է անցկացվում, այդուհանդերձ կան երեխաներ, ովքեր օրինակ չեն կարողանում 40 րոպե նստել, մայրիկի, սնվելու, դրսի, խաղի պահանջ են ունենում և այլն, մինչդեռ, միայն ճիշտ կազմակերպած առօրյան և հարմարավետ միջավայրը կնպաստեն երեխայի մաքսիմալ հնարավորությունների և ընդունակությունների դրսևորմանը և ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

Ընդհանրացնելով վերը նշվածը կարող եմ ասել, որ դպրոց հաճախելը երեխայի կյանքում շրջադարձային փուլ է, ուստի սոցիալականացման գործընթացը պայմանավորված է ինչպես երեխայի՝ ուսումնական գործունեությամբ և դպրոց հաճախելու պատրաստվածության աստիճանով, այնպես էլ ընտանեկան

դաստիարակության առանձնահատկություններով: Մանկավարժը պետք է հատկապես զգոն լինի 6 տարեկան աշակերտների հետ աշխատելիս և անհրաժեշտաբար պետք է հաշվառի նրանց տարիքային առանձնահատկությունները, որը մեծապես կօգնի կրտսեր դպրոցականի հարմարման գործընթացին:

Այսպիսով՝ հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ 6 տարեկան երեխաների՝ դպրոցին սոցիալականհարմարման գործընթացի վրա ազդում են տարբեր բարենպաստ և անբարենպաստ գործոններ, օրինակ՝բարենպաստ գործոններից առանձնացնեմ հետևյալները.

- ✓ լիարժեք ընտանիքը,
- ✓ ընտանիքում դաստիարակության ճիշտ մեթոդների կիրառումը,
- ✓ ընտանիքի անդամների հետ հուզական կապը,
- ✓ ծնողների բարձր կրթական ցենզը,
- ✓ դպրոցին պատրաստ լինելու հանգամանքը,
- ✓ երեխայի կողմից սեփական կարգավիճակի ադեկվատ գնահատումը,
- ✓ հասակակիցների և ուսուցիչների շրջանում հաղորդակցման դժվարություններ չունենալը,
- ✓ հասակակիցների շրջանում բարենպաստ կարգավիճակը,
- ✓ կրթական միջավայրի դրական ազդեցությունը,
- ✓ ուսման մեջ հաջողություններ ունենալը,
- ✓ ադեկվատ ինքնագնահատականը,
- ✓ արտադպրոցական խմբակներ հաճախելը
- ✓ դպրոցի «բաց» լինելը ծնողների համար և այլն:

Իսկ անբարենպաստ գործոնների շարքին են դասվում՝ ոչ լիարժեք ընտանիքը,

- ✓ ընտանիքում դաստիարակության ոչճիշտմեթոդներիկիրառումը,
- ✓ ծնողների ցածր կրթական ցենզը.
- ✓ դպրոցին պատրաստ չլինելու հանգամանքը,
- ✓ դպրոցական ռեժիմին չհարմարվելը,

- ✓ մեծահասակների, հասակակիցների և ուսուցիչների հետ հաղորդակցման դժվարություններ ունենալը,
- ✓ երեխայի կողմից ոչ ադեկվատ ինքնագնահատական ունենալը,
- ✓ սեփական գործունեությունը պլանավորել չկարողանալը,
- ✓ տեղեկատվության պակասը:

Այսօր առավել քան կարևորվում է կրտսեր դպրոցականի ինքնուրույնությունը զարգացնելու, նրա մեջ ինքնաճանաչման, ինքնագնահատման, ինքնատիրապետման, ինքնակազմակերպման և ինքնաիրացման, ինչպես նաև հասակակիցների հետ համագործակցության կարողությունների զարգացումը: Հաճախ է պատահում, որ ընտանիքներում երեխային միշտ գովաբանում են, իսկ դպրոցում ստեղծվող նրանց իրական գնահատականը չի համապատասխանում ընտանիքներում ստեղծվածի հետ, որն էլ հակասություններ է առաջացնում երեխայի հոգեկանում:

Դասվարի հետ զրույցի արդյունքում պարզվեց, որ բարձր ինքնագնահատականը պայմանավորված է բարձր առաջադիմությամբ, ընտանիքում ընդունված և սիրված լինելով, ընտանիքում լինելով միակ երեխան, հասակակիցների կողմից ընդունված և հարգված լինելով, ինքնահաստատման զգացումով: Երեխաների մոտ ադեկվատ ինքնագնահատականի զարգացման համար անհրաժեշտ է դասարանում հոգեբանական հարմարավետության և աջակցության մթնոլորտի ստեղծում: Բարձր մասնագիտական վարպետությամբ առանձնացող ուսուցիչները ձգտում են ոչ միայն բովանդակայնորեն գնահատել աշակերտների աշխատանքը, ոչ միայն սովորեցնել նրանց գնահատման միասնական սկզբունքներին, այլև իր դրական սպասելիքները ներկայացնել յուրաքանչյուր աշակերտին, ստեղծել դրական հուզական ֆոն: Կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի կայացումը կախված է ոչ միայն նրա առաջադիմությունից և ուսուցչի հետ շփման առանձնահատկություններից, այլև մեծ նշանակություն ունի նաև ընտանեկան դաստիարակության ոճը, ընտանեկան արժեքները: Չափազանց բարձր ինքնագնահատականով երեխաները ընտանիքում դաստիարակվում են ընտանեկան «կուռքի» սկզբունքով, անքննադատության մթնոլորտում: Ընտանիքներում, որտեղ մեծանում են բարձր, բայց ոչ չափազանցված ինքնագնահատականով երեխաներ,

նրանց անձի նկատմամբ ուշադրությունը համադրվում է բավարար պահանջկոտության հետ: Ոչ ադեկվատ ինքնագնահատական ունեցող աշակերտները կարող են ունենալ ուսումնական դժվարություններ:

Այսպիսով, ելնելով կազմակերպած և անցկացրած հետազոտական աշխատանքի արդյունքներից կարող եմ ասել, որ կրտսեր դպրոցականների սոցիալականացման մակարդակի բարձրացման գործում մեծ դեր են կատարում դաստիարակը, ծնողը և դասվարը:

Ուսումնասիրելով և վերլուծելով կրտսեր դպրոցականների սոցիալականացման գործընթացը և դուրս բերելով մի շարք դժվարություններ հարմարման և սոցիալականացման գործընթացների հետ կապված, առաջարկում ենք կրտսեր դպրոցականների դաստիարակության ու սոցիալականացման գործընթացների մանկավարժական պայմանների համալիր, որը կօգնի տարրական դասարանի ուսուցչին, դպրոցականների ծնողներին: Այդ գործընթացի իրականացման ընթացքում պետք է դասվարին աջակցեն նաև դպրոցի դաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրենը, ծնողական խորհուրդը, աշակերտական խորհուրդը, ուսուցչի օգնականը:

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Անցումային ծրագիրը ներառում է՝

1.Հուշագիր ծնողների համար/տես հավելվածում/

2.Մանկապարտեզից դպրոց անցնելու ընթացքում անհամապատասխանության ռիսկը նվազեցնելու միջոցառումների ցուցիչ ցանկ/ուսուցիչների համար// տես հավելվածում/:

3.Կրտսեր դպրոցականի սոցիալականացման նպատակով մանկապարտեզի ավագ խմբում կազմակերպել թեմատիկ պարապմունքներ /սյուժետադերային խաղեր/՝ նվիրված դպրոցական կյանքի ծանոթացմանը, դպրոցական ուսումնառության հանդեպ դիրքորոշմանը, հասակակիցների, ուսուցչի հետ համագործակցությանը:

Ներկայացնում եմ մանկապարտեզում կազմակերպվող ավագ նախադպրոցական տարիքի երեխաների դպրոցին սոցիալական հարմարմանը նպաստող պարապմունքների թեմատիկան, նպատակը:

Պարապմունք 1-Ծանոթացում դպրոցի հետ:

Նպատակն է՝- երեխաներին ծանոթացնել դպրոցին, շեշտադրել նրանց կյանքում դպրոցի ունեցած կարևորագույն դերն ու նշանակությունը/կազմակերպել սյուժետադերային խաղ/:

Պարապմունք 2-Ինչու՞ եմ ցանկանում դպրոց գնալ:

Նպատակն է՝ բացահայտել երեխաների՝ դպրոցական ուսուցման նկատմամբ ունեցած դիրքորոշումը, շարունակել ծանոթացումը դպրոցի, դպրոցական կյանքի հետ:

Պարապմունք 3-Իմ առաջին ուսուցչուհին:

Նպատակն է՝ կարևորել երեխաների կյանքում նրանց առաջին ուսուցչուհու ունեցած անգնահատելի դերը՝ շեշտելով այն, որ հենց առաջին ուսուցչուհին է գրել, կարդալ սովորեցնում, օգնում հաղթահարել հարմարման դժվարությունները:

Պարապմունք 4-Իմ երազած դպրոցը:

Նպատակն է՝ ձևավորել ինքնարտահայտվելու, սեփական տպավորությունները կիսելու կարողություններ:

Պարապմունք 5-Իմ դասընկերները:

Նպատակն է՝ երեխաների մեջ մշակել սեր և հարգանք իրենց ապագա դասընկերների նկատմամբ, ձևավորել համբերություն և զսպվածություն իրենց ընկերներին մինչև վերջ լսելու համար/առաջարկել խնդրահարույց իրավիճակներ և լուծման տարբերակներ ուղղորդելով երեխաների ընտրել այն տարբերակը, որտեղ նրանք կդրսևորեն սեր, հարգանք և հանդուրժողականություն:

Պարապմունք 6-Սեպտեմբերի մեկը:

Նպատակն է՝ նշել սեպտեմբերի մեկը որպես ուսումնական նոր տարվա սկիզբ, համատեղ նկարելու միջոցով երեխաներին հնարավորություն տալ թղթին հանձնել սեպտեմբերի 1-ի՝ իրենց անելիքները, զարգացնել կոլեկտիվ աշխատելու, միմյանց առաջարկությունները լսելու հմտություններ:

Պարապմունք 7-Իմ պայուսակը:

Նպատակն է՝ ամբողջացնել դպրոցի վերաբերյալ երեխաների գիտելիքները, ծեփակերտման միջոցով ցուցադրել իրենց պայուսակի պարունակությունը, նպաստել երևակայության, մանր մոտորիկայի զարգացմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ելնելով մանկավարժահոգեբանական գրականության ուսումասիրությունից և կատարված փարձարարական աշխատանքների արդյունքների վերլուծությունից կարելի է եզրակացնել.

1.Կրտսեր դպրոցականի սոցիալականացման գործընթացը մանկավարժության կարևորագույն խնդիրներից մեկն է և ենթադրում է երեխաների սոցիալ-անձնային, մտավոր խնդիրների իրականացում դպրոցական ուսումնառության ընթացքում, ստեղծելով հավասար մեկնարկային պայմաններ:

2.Բացահայտվել են կրտսեր դպրոցականի սոցիալականացման դժվարությունները պայմանավորված դպրոցական կյանքին ոչ լիարժեք պատրաստվածությամբ, ուսուցչի և համադասարանցիների հետ համագործակցային փոխհարաբերություններով:

3.Մշակվել են մանկավարժական համապատասխան պայմաններ մանկապարտեզից-դպրոց սահուն անցման գործընթացի արդյունավետ կազմակերպման ընթացքում (մտավոր խնդիրների իրականացում, պահանջմունքային նոր մակարդակի ձևավորում, հարաբերականորեն կայուն վարքագծերի ձևավորում, երեխայի սոցիալական ուղղվածության զարգացում) ապահովելով մանկապարտեզ-դպրոց աշխատանքի շարունակական կապը:

4.Կարևորվել է առաջին ուսուցչի դերը դպրոցական ուսումնառության ընթացքում որպես կրտսեր դպրոցականի սոցիալականացման մանկավարժական պայման, ով ստեղծում է բարենպաստ մթնոլորտ դասարանում, աշխատում է ուսումնական դրդապատճառի մակարդակի բարձրացման վրա, երեխայի համար դասի ժամանակ ստեղծում հաջողության հասնելու իրավիճակ:

Այսպիսով, փորձարարական աշխատանքների տվյալները թույլ են տալիս եզրակացնել, որ ուսուցչի, աշակերտների և հասակակիցների միջև ճիշտ փոխհարաբերությունները, ծնողների դիրքորոշումը դպրոցական կյանքին սոցիալական հարմարման գլխավոր պայման են:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աստվածատրյան Մ., Վարդումյան Ս. և ուրիշներ, «Ուսումնառությունն ու դասավանդումը կրտսեր դպրոցում», Երևան-2007թ., 204 էջ
2. Նախադպրոցական հաստատությունից տարրական դպրոց երեխայի սահուն անցումը կազմակերպելու մեթոդական ուղեցույց, Երևան 2017թ.
3. ՀովհաննիսյանԱ. Դպրոցիշեմին /ձեռնարկծնողներիևմանկավարժներիհամար/, Երևան, 2007թ.,85 էջ
4. Պարտեզ-Նախադպրոցականկրթականհամալիրծրագիր, /ավագ խումբ/ Երևան 2008թ., 203 էջ
5. Ծննդից մինչև վեց տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչներ, Երևան 2011թ., էջ 163-173
6. Варламова А.Я. Школьная адаптация, Волгоград, 2005г.
7. ГаврилыгчеваГ.Ф., «Младшийшкольникиегоценности»,Начальнаяшкола. - 2008г., № 7, 368 с.
8. Гин С.И., Прокопенко И.Е. Первые дни в школе, Москва 2002г.
9. ДанилюкА. Я., КондаковА. М., «Воспитаниеисоциализациямладшихшкольников»/ Научныесообщения // Педагогика. М.-2009г., 58с.
10. Изотова Е.И. Индивидуализация профессиональной деятельности педагогов и психологов и её влияние на социализацию младших школьников.//Психология и школа. – 2010г., №1, С. 24 - 39
11. КривовЮ. И., «Оместепонятия "социализация" всовременнойпедагогике»// Педагогика№2. М.-2003г. 106с.

ՀԱԿԵԼԿԱԾ

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

(1-ին դասարանում դասավանդող ուսուցիչների համար)

Հարգելի՛ մասնակից, լրացնելովայսհարցաթերթը, ԴուքտալիսեքՁերթույլտվությունը՝օգտագործելստացվածտվյալները, Արազափի միջն.դպրոցի ուսուցչուհի՝ Ն. Փիլոյանին՝ հետազոտական աշխատանքում:

Նշե՛ք Ձեր կողմից դասավանդվող առարկան 1-ին դասարանում----------

1. Ուսուցանելով 1-ին դասարանում, ինչպիսի՞ դժվարություններիեքհանդիպել:

- Աշակերտներըդժվարենըմբռնումիմբացատրածը
- Աշակերտները շուտ ենհոգնում
- Այլպատասխան----------

2. 1-ին դասարանում նկատե՞լ եք աշակերտների, ովքեր ավելի մեծ ուշադրության կարիք ունեն / կապված սոցիալական հարմարման հետ/

- Այո, միայն մեկին
- Այո ,մի քանիսին
- Ամբողջ դասարանը ունի աղապտացման կարիք
- Ո՛չ, չեմ նկատել

3. Ի՞նչ եք կարծում, 1-ին դասարանցիներն ավելի շատ ինչի՞ կարիք ունեն:

---

4. Ինչպիսի՞ մոտեցում եք ցուցաբերում դասապրոցեսի ընթացքում, որը ապահովում է բոլորին ներգրավվածությունը և մասնակցությունը դասապրոցեսին:

-

6. 1-ին դասարանում նկատե՞լ եք աշակերտների, ովքեր մեկուսացված են/ առանձնացված ենխմբից/:

- Այո
- Ոչ

7. Ի՞նչեք կարծում, ինչպիսի՞ մեթոդներև հնարներ պետք է կիրառել դասապրոցեսի ընթացքում, որպեսզի կրտսեր դպրոցի միջին դպրոցի անցումը սահուն ընթանա:

Շնորհակալություն հարցմանը մասնակցելու համար

Հարցեր նախատեսված ուսուցչի հետ զրույցի համար

Ուսուցիչը պատասխանում է հարցերին՝ բնութագրելով աշակերտներից յուրաքանչյուրին:

1. Երեխայի անունը,ազգանունը:
2. Հեշտությամբ է բաժանվում ծնողներից /ինքնուրու՞յն է գնում դասարան/:
3. Հաճախ է հիշում մայրիկին, հայրիկին:
4. Հարմարվել է դպրոցի առօրյային /դասեր, օրվա նոր ռեժիմ և այլն/:
5. Ինչպես է շփվում հասակակիցների հետ /խաղում է, հաճախ էվիճում,արագ է հաշտվում,մեկուսանում է նրանցից, առաջատար է և այլն/:
6. Ինչպես է շփվում ուսուցչի հետ /անկաշկանդ է, կարող է դիմել անհանգստացնող հարցով, չափազանց կաշկանդված է,և այլն/:
7. Նշել վարքի առանձնահատկությունները /շարժուն է, մեկուսացած է, ագրեսիվ է, քմահաճ է, կամակոր է, հարմարվող է և այլն/:
8. Ինչպիսի փոփոխություններ են դիտվել երեխայի մոտ դպրոց հաճախելու սկզբնական շրջանի համեմատ:/դժվարությամբ էր գալիս, լալիս էր, ուզում էր շուտ գնալ տուն, այժմ սիրով է հաճախում,դանդաղ է հարմարվում և այլն/:
9. Կա՞ն աշակերտներ, ովքեր չեն հաճախել մանկապարտեզ և ի՞նչ դժվարություններ ունեն նրանք սոցիալական հարմարման ընթացքում:

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

(1-ին դասարանում սովորող աշակերտների ծնողների համար)

Հարգելի՛ մասնակից, լրացնելով այս հարցաթերթը, Դուք տալիս եք Ձեր թույլտվությունը՝ օգտագործել ստացված տվյալները, Արազափի միջն. Դպրոցի ուսուցչուհի՝ Ն. Փիլոյանին՝ հետազոտական աշխատանքում:

1. Ձեր երեխան սիրո՞վ է հաճախում դպրոց:

- Այո
- Ոչ
- Երբեմն ցանկանում է մնալ տանը՝ տարբեր պատճառաբանություններով

2. Նախակրթարանից դպրոցի անցումը ինչպե՞ս է ընթացել ձեր երեխայի մոտ

- Սահուն է ընթացել
- Երեխաս բավականին դժվարությամբ է հարմարվում դպրոցին և պահանջներին
- Այլ պատասխան----------

3. Ինչպե՞ս է իրեն դրսևորում ձեր երեխան իրեն անծանոթ միջավայրում:

- Կաշկանդվում է
- Հեշտությամբ մերվում է նոր խմբին և յուրացնում պահանջները
- Փորձում է թելադրել իր կանոնները

4.Օրվա ավարտին ձեր երեխան պատմու՞մ է ձեզ դպրոցական օրվա մասին:

- Այո, հաճախ
- Այո, ամենօր
- Երբեմն
- Ոչ
- Այլտարբերակ----------

6. Եղե՞լ են դեպքեր, որ ձեր երեխան չի ցանկացել դպրոց գնալ:

- Այո, երբեմն
- Ոչ միշտ է սիրով հաճախում
- Այլ տարբերակ----------

7. Ձեր երեխան ձեզ հետ խոսո՞ւմ է՝ դպրոցում իրեն անհանգստացնող հարցերի շուրջ:

- Այո
- Ոչ

8. Ձեր երեխան արդյո՞ք ունի անհանգստության և տագնապի զգացողություն / վախ, որ իրեն ուսուցիչը սխալ կհասկանա/:

- Այո
- Ոչ

9.Տպավորությունը առաջին ուսուցչուհու մասին----------

Շնորհակալություն հարցմանը մասնակցելու համար

Հարցարան նախատեսված ծնողների համար

1. Երեխայի անունը, ազգանունը:
2. Ինչ տրամադրությամբ է երեխան առավոտյան պատրաստվում դպրոց գնալ:
3. Հեշտությամբ է բաժանվում ձեզանից / ինքնուրույն է գնում դասարան/:
4. Լիովին հարմարվել է դպրոցի /օրվա/ նոր ռեժիմին:
5. Սիրում է պատմել դպրոցում կատարվածի մասին,կիսվել տպավորություններով:
6. Ինչպես է շփվում հասակակիցների հետ /խաղում է, հաճախ է վիճում, մեկուսանում է նրանցից, առաջատար է և այլն/:
7. Ինչպես է շփվում ուսուցչի հետ /անկաշկանդ է, կարող է դիմել անհանգստացնող հարցով, վախենում է և այլն/:
8. Կարողանու՞մ է հաղթահարել ուսումնական ծանրաբեռնվածությունը առանց գերլարվածության:
9. Արդյոք նկատվել են վարքային փոփոխություններ դպրոց գնալուց հետո:
10. Ինչպիսի փոփոխություններ են դիտվել երեխայի մեջ դպրոց հաճախելու սկզբնական շրջանի համեմատ:

Հարցարան նախատեսված առաջին դասարանցիների համար (տես հավելված 3)

1. Երեխայի անունը, ազգանունը:
1. Մինչ դպրոց գնալն ինչ գիտեիր դպրոցի մասին:
2. Մինչ դպրոց գնալն ինչ գիտեիր ուսուցչի մասին:
3. Երբ առաջին անգամ տեսար ուսուցչուհուդ, ի՞նչը ամենից շատ քեզ մոտ տպավորվեց:
4. Քո կարծիքով ինչպի՞սին պետք է լինի ուսուցիչը:
5. Երբ առաջին անգամ մտար դասարան, ինչպիսին էին քո համադասարանցիները:
6. Հեշտությա՞մբ ես շփվում քո համադասարանցիների հետ:
7. Կա՞ն առարկաներ, որոնք քեզ համար դժվար են և դրանք դժվարությամբ ես ընկալում:
8. Հաճա՞խ ես դիմում ուսուցչուհուդ օգնության համար:

Հուշագիր կրտսեր դպրոցականների ծնողների համար

Սոցիալական հարմարման շրջանում

- Խրախուսեք ձեր երեխային տանը՝ խոսել դպրոցական գործերի մասին:
- Մի՛սահմանափակեք ձեր հետաքրքրությունը մի պարզ հարցով, ինչպիսին է՝ «Ինչպե՞ս անցավ ձեր օրը դպրոցում»: Հաճախ ընտրեք ժամը և ուշադիր խոսեք ձեր երեխայի հետ դպրոցի մասին: Անգիր սովորիր առանձին անունները, իրադարձությունները և մանրամասները, որոնց մասին երեխան պատմում է քեզ, օգտագործիր դրանք ավելի ուշ՝ դպրոցի մասին նմանատիպ խոսակցություններ սկսելու համար: Նաև անպայման հարցրեք ձեր երեխային իր դասընկերների, դասարանի գործերի, դպրոցական առարկաների, ուսուցիչների մասին:
- Պարբերաբար խոսեք ձեր երեխայի ուսուցիչների հետ՝ նրանց առաջընթացի, վարքի և այլ երեխաների հետ հարաբերությունների մասին: Մի՛ հապաղեք խոսելու սուցչի հետ, եթե զգում եք, որ անտեղյակ եք ձեր երեխայի դպրոցական կյանքի կամ դպրոցական խնդիրների կամ դպրոցի և տան խնդիրների միջև փոխհարաբերություններից:
- Ուսուցչի հետ ցանկացած զրույցի ժամանակ արտահայտեք ձեր հանձնառությունը՝ անելու ամեն ինչ ձեր երեխայի դպրոցական կյանքը բարելավելու համար:

- Եթե ձեր և ուսուցչի միջև լուրջ տարաձայնություններ են ծագում, ամեն ինչ արեք դրանք խաղաղ ճանապարհով լուծելու համար, նույնիսկ եթե դրա համար պետք է խոսեք տնօրենի հետ: Հակառակ դեպքում, դուք կարող եք պատահաբար ձեր երեխային դնել անհարմար դրության մեջ՝ ընտրելու ձեր հանդեպ հավատարմության և ձեր ուսուցչի հանդեպ հարգանքի միջև:

- Եթե խնդիր է ծագում, երբեք երեխայի ներկայությամբ վատ մի՛ խոսեք ուսուցչի մասին:

- Մի՛շտապեք հապճեպ դատողություն անել: Ավելի լավ է գնալ դպրոց և ուսուցչի հետ միասին կարգավորել ստեղծված իրավիճակը: Հիշեք, որ երեխայի մոտ բարոյական նորմերը դրվում են առաջին հերթին ոչ թե դպրոցում, այլ ընտանիքում: Մեծերի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը (լինի դա դպրոցում անծանոթ, թե ուսուցիչ) վատ հատկանիշէ:
- Իմացեք ձեր երեխայի դպրոցական ծրագիրը և դպրոցի առանձնահատկությունները, որտեղ նա սովորում է: Դուք պետք է իմանաք, թե ինչպիսին է ձեր երեխայի դպրոցական կյանքը: Մասնակցեք բոլոր միջոցառումներին և հանդիպումներին: Օգտագործեք բոլոր հնարավորությունները՝ պարզելու, թե ինչպես է ձեր երեխան սովորում և ինչպես են նրան սովորեցնում:
- Օգնեք ձեր երեխային կատարել տնային աշխատանքը, բայց մի՛ արեք դա նրա փոխարեն:
- Մի՛կապեք ձեր երեխայի գնահատականները ձեր պատժի և պարգևատրման համակարգի հետ... Ձեր երեխան պետք է իր լավ սովորելը համարի որպես պարգև, իսկ ձախողումը՝ որպես պատիժ: Եթե ձեր երեխան լավ է սովորում, ավելի հաճախ ցույց տվեք ձեր ուրախությունը, այս մասին կարող եք նույնիսկ փոքրիկ խնջույքներ կազմակերպել: Բայց արտահայտեք ձեր մտահոգությունը, եթե ձեր երեխան լավ չի սովորում դպրոցում և, անհրաժեշտության դեպքում, պնդեք ավելի զգույշ կատարել տնային և դասային աշխատանքները:
- Փորձեք, որքան հնարավոր է, պատիժներ և պարգևներ չսահմանել, օրինակ՝ լավ գնահատականների համար կարող եք կես ժամ ավելի հեռուստացույց դիտել, վատ գնահատականների համար՝ կես ժամ ավելի քիչ: Միայն այս կանոնները կարող են հանգեցնել հուզական խնդիրների: Երբեք մի՛ հանդիմանեք երեխաներին՝ վատ գնահատականների համար, այդ դեպքում նրանք չեն ասի ձեզ և կխաբեն:
- Օգնեք ձեր երեխային՝ հետաքրքրվել այն ամենով, ինչ սովորեցնում են դպրոցում: Պարզեք, թե ընդհանրապես ինչն է հետաքրքրում ձեր երեխային, այնուհետև կապ հաստատեք նրա հետաքրքրությունների և դպրոցում սովորած առարկաների միջև: Օրինակ՝ երեխայի սերը ֆիլմերի հանդեպ կարող

է վերածվել գրքեր կարդալու ցանկության՝ նվիրելով գիրք, որի հիման վրա էլ բեմադրված է այն ֆիլմը, որն իրեն դուր է գալիս: Կամ երեխայի սերը խաղի հանդեպ կարող է վերածվել նոր բան սովորելու ցանկության: Որևէ հնարավորություն փնտրեք ձեր երեխայի համար կիրառելու այն՝ ինչ սովորել է դպրոցում, իր տնային գործունեության մեջ: Օրինակ, հանձնարարեք նրան հաշվարկել ճաշ պատրաստելու համար անհրաժեշտ սննդի քանակը կամ որոշակի մակերես ներկելուհամար՝ անհրաժեշտ ներկի քանակը:

- Ընտանեկան խաղաղությունը կօգն ձեր երեխային ավելի արդյունավետ լուծել դպրոցում առկա խնդիրները: Հարմարվողականության շրջանում երեխային ապահովեք հանգիստ, նուրբ միջավայրով, պահպանեք հստակ ռեժիմ, այսինքն՝ օգնեք երեխային անընդհատ զգա ձեր աջակցությունն ու օգնությունը։

Դժվար իրավիճակներում ծնողների հիմնական օգնականներն են համբերությունը, ուշադրությունը և ըմբռնումը: Սիրե՛ք ձեր երեխաներին։

Մանկապարտեզից դպրոց անցնելու ընթացքում անհամապատասխանության ռիսկը նվազեցնելու միջոցառումների ցուցիչ ցանկ.

/ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ/

1.ՈՒսունական տարվա ավարտին համագործակցեք մանակապարտեզի/նախակրթարանի/ աշխատակիցների հետ ծանոթանալու համար այն երեխաների առանձնահատկություններին, ովքեր ամիսներ անց ձեր աշակերտներն են լինելու, Օգնեք դաստիարակին խաղերի և պարապմունքների միջոցով ամիսներ առաջ իրազեկել և մոտիվացնե երեխային դպրոց գնալուն։

2.Ուսումնական տարվա սկզբում ուսուցիչներին առաջարկել ունենալ այցեքարտեր՝ որտեղ կլինեն սովորողների տվյալները/անուն ազգանուն/

3. Առաջարկել դասվարին՝ ուսումնական տարվա սկզբին անցկացնել «Ճամփորդություն դպրոցով» խաղը, որպեսզի երեխաները ծանոթանան դպրոցին

1.Առաջարկել դասվարին երեխաների միջև խնդիրներ առաջանալու դեպքում դասընթացներ անցկացնել՝դասարանը համախմբելու համար։

2. Ռացիոնալ դասակառուցման սկզբունքների պարտադիր կիրառում (դաղարների օգտագործում, ֆիզկուլտուրայի րոպեներ և այլն)

3. Անցկացնել ծնողական ժողովներ և դասարանական ժամեր՝ «Դպրոցականի առօրյան՝ որպես առողջ ապրելակերպի հիմք./կարևորել սոցիալական ադապտացիային վերաբերվողհարցերը